ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ

2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԵԾԱՄՈՐ 2023 թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒԹՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների բնագավառում

Մեծամոր Համայնքի ղեկավարը 2022 թվականի ընթացում քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների բնագավառում , օրենքով սահմանված կարգով իրականացրել է քաղաքացիների ընդունելությունը , քննության է առել քաղաքացիների դիմումներն ու բողոքները և ձեռնարկել է դրանց լուծմանն ուղված համապատասխան միջոցներ: Տարվա ընթացքում Մեծամորի համայնքապետարան մուտք է եղել 5736 գրություն, որոնք քննարկվել և պատասխանվել են ժամանակին, տրամադրվել է տարբեր բնույթի թվով 5684 տեղեկանք, ելք է եղել թվով 5064 գրություն, համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է տարբեր բնույթի ընդհանուր թվով 2595 որոշում, արձակվել է 471 կարգադրություն:
2022 թվական ընթացքում համայնքի ավագանու կողմից ընդունվել է տարբեր բնույթի թվով 277 որոշում :
Մեծամոր համայնքում իրավախախտում կատարած թվով 45 ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ, որոնցից 41-ը ֆիզիկական անձանց նկատմամբ, իսկ 4-ը՝ իրավաբանական:

Հարուցված թվով 45 վարչական վարույթից, 4-ը հարուցվել է ինքնակամ կառուցված ապօրինի շինությունների դեպքով, 4-ը՝ ավազակոպճային խառնուրդի ապօրինի արդյունահանման դեպքով, 1-ը՝ հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու և 37-ը անշարժ գույքի, հողի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի չվճարված հարկային պարտավորությունների դեպքով:

Վերը նշված 37 վարչական վարույթներից 16-ով նյութեր են նախապատրաստվել հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ուղարկելու նպատակով:

Կազմվել և ավագանու կողմից նոր խմբագրությամբ հաստատվել են Մեծամոր համայնքում և բնակավայրերում գործող թվով 18 մանկապարտեզների և թվով 20 բժշկական ամբուլատորիաների կանոնադրությունները:

ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում հաշվառումից հանվել են ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի թվով 31 նախկին համայնքապետարանները:

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում բնակիչների իրազեկ լինելու նպատակով պատշաճ կերպով համայնքի ղեկավարի գործունեության վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը ներակայացվել է Մեծամորի համայնքապետարանի համայնքների կառավարման տեղեկատվական համակարգերի և ֆեյսբուքյան էջերում : Համայնքի բնակիչները մասնակից են եղել զարգացման ծրագրերի, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների, տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում անցկացված հանրային քննարկումներին, որոնց վերաբերյալ ընդունելի են եղել բնակիչների առաջարկություններն ու նախաձեռնությունները:
2022 թվականին կազմվել և ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը և համայնքի տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ):

Ֆինանսների բնագավառում

Մեծամոր համայնքի 2022 թվականի բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 2715790,8 հազար դրամ, պլանավորված 2977267,2 հազար դրամի դիմաց, կամ եկամուտների պլանը կատարվել 91,2 %-ով., որից սեփական եկամուտների փաստացի հավաքագրումը կազմել է 911522,7 հազար դրամ, պլանավորված 897973,0 հազար դրամի դիմաց, կամ սեփական եկամուտների պլանը կատարվել է 101,5 %-ով:

Եկամուտների անվանումը			
	պլան	փաստացի	կատ. %
I. Ընդամենը վարչական բյուջեի եկամուտներ	**2480670,3**	**2499820,4**	**100,8**
որից՝ սեփական եկամուտներ	**897973,0**	**911522,7**	**101,5**
1.Հարկեր և տուրքեր	**707973,0**	**672007,7**	**94,9**
այդ թվում			
1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից	***271909,0***	***287130,2***	***105,6***
ա/ Գույքահարկ շենքեր, շինություններից	6000,0	11072,5	184,5
բ/ Հողի հարկ	52000,0	109461,4	210,5
1.2 Անշարժ գույքի հարկ	***213909,0***	***166596,3***	***77,9***
ա/ Անշարժ գույքի հարկ	213909,0	166596,3	77,9

1.3 Գույքահարկ այլ գույքից	*418440,0*	*363269,6*	*86,8*
ա/ Գույքահարկ՝ փոխադրամիջոցներից	418440,0	363269,6	86,8
1.4 Տեղական տուրքեր	*17624,0*	*21607,8*	*122,6*
ա/ Շինարարության թույլտվություն	2500,0	4500,5	180,0
բ/ Շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման և վերականգման	150,0	34,7	23,1
գ/ Շենքերի շինությունների քանդման թույլտվություն	80,0	17,0	21,3
դ/ Առևտրի և տեխ. սպասարկման կետերում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվ.	384,0	412,5	107,4
ե/ Ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն	9120,0	9198,7	100,9
զ/ Գյուղ մթերքների բացօթյա վաճառք	200,0	1562,0	781,0
է/ Վառելիքաքսայուղերի բացօթյա վաճառքի թույլտվություն	2900,0	3381,1	116,6
ը/ Համայնքի տարածքում արտաքին գովազդի թույլտվություն	1000,0	1318,4	131,8
թ/Քաղաքացիական հոգեհանգստի ծիսակատարության ծառայության թույլտվություն	500,0	504,0	100,8
ժ/ Հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի կազմակերպման օբյեկտներ	290,0	260,0	89,7
ի/ Հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն	0	249,0	0
լ/ Ֆիրմային անվանումների օգտագործման թույլտվություն	500,0	170,0	34,0
2. Պաշտոնական դրամաշնորհներ	**1582697,3**	**1588297,7**	**100,4**
ա/ Դոտացիա	1582697,3	1582697,2	100,0
բ/ Սուբվենցիա	0	5600,5	0
3 .Այլ եկամուտներ՝ **այդ թվում**	**190000,0**	**239515,1**	**126,1**
3.1 Վարձակալությունների դիմաց վճարներ	*52500,0*	*71130,4*	*135,5*
ա/ Հողի վարձակալության վճարներ	40000,0	56406,4	141,0
բ/ Տարածքի վարձակալության վճարներ	12500,0	14724,0	117,8
3.2 Մատուցված ծառայությունների դիմաց վճարներ *այդ թվում*	*18800,0*	*30437,6*	*161,9*
3.3 Տեղական վճարներ՝ *այդ թվում*	*88700,0*	*104329,3*	*117,6*

ա/ Շին ավարտի փաստագրում	0	420,2	0
բ/ Հողերը հատկացնելու հետ վերցնելու, վարձակալության տրամադրելու փաստ. կազմ.	0	2506,4	0
գ/ Աղբահանության դիմաց վճարներ	20000,0	28384,6	141,9
դ/ Մրցույթների և աճուրդների կազմակերպումից վճար	2000,0	588,0	29,4
ե/ Մանկապարտեզների ծառայությունների դիմաց վճարներ	52000,0	53510,0	102,9
զ/ Արվեստի դպրոցի և մարզադպրոցի ծառայությունների դիմաց վճարներ	14700,0	16544,9	112,6
է/ Ջրմուղ կոյուղու ծառայություններ	0	2371,2	0
ը/ Արխիվից փաստաթղթեր տրամադրելու	0	4,0	0
3.4 Շինարարության օրինականացում	***30000,0***	**25156,8**	***83,9***
3.5 Վարչական իրավախախտումներից եկամուտներ	***0***	***950,0***	***0***
3.6 Այլ եկամուտներ	***0***	***7511,0***	***0***
I I Ֆոնդային բյուջե	***604824,6***	***215970,4***	***35,7***
Կապիտալ դրամաշնորհներ	*604824,6*	*215970,4*	*35,7*
ԸՆԴԱՄԵՆԸ	***2977267,2***	***2715790,8***	***91,2***

Տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 589597,4 հազար դրամ,

որից՝

Ֆոնդային բյուջեի մնացորդ 589597,4 հազար դրամ

2. Մեծամոր համայնքի 2022 թվականի բյուջեի փաստացի ծախսը կազմել է 2885124,7 հազար դրամ, պլանավորված 3566864,6 հազար դրամի դիմաց, հետևյալ գործառական և տնտեսագիտական դասակարգմամբ

Բովանդակություն	պլան	փաստացի
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	986261,8	908346,0
ա/ Օրենսդիր և գործադիր մարմին	***916728,8***	***846552,6***
• աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	660000,0	645823,2
• պարգևատրումներ	37687,0	31834,5
• այլ վարձատրություններ	3500,0	3500,0
• էներգետիկ ծառայություններ	60000,0	59919,8

• կոմունալ ծառայություններ	1860,0	1855,1
• կապի ծառայություններ	7500,0	7122,2
• ապահովագրական ծախսեր	990,0	615,0
• ներքին գործուղումներ	500,0	73,8
• արտասահմանյան գործուղումներ	5000,0	2464,7
• վարչական ծառայություններ	500,0	0
• համակարգչային ծառայություններ	8,4	0
• տեղեկատվական ծառայություններ	15,0	15,0
• ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	3500,0	3419,5
• հատուկ մասնագիտական ծառայություն	17250,0	17247,9
• շենքերի շինությունների ընթացիկ նորոգում	990,0	44,0
• մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	12000,0	7373,8
• գրասենյակային նյութեր	7300,0	6228,5
• տրանսպորտային նյութեր	36000,0	34174,5
• կենցաղային և հանրային սննդի նյութեր	4000,0	2244,5
• հատուկ նպատակային այլ նյութեր	2749,5	1326,0
• պարտադիր վճարներ	37,1	37,1
• շենքերի շինությունների կապիտալ նորոգում	33421,8	5589,4
• վարչական սարքավորումներ	15000,0	9887,3
• այլ մեքենաներ և սարքավորումներ	1420,0	881,8
• նախագծահետազոտական ծախսեր	5500,0	4875,0
բ/ Ընդհանուր բնույթի ծառայություններ	***4450,0***	***3319,2***
• աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	203,3	203,3
• կապի ծառայություն	24,0	24,0
• համակարգչային ծառայություններ	3272,7	2602,0
• տեղեկատվական ծառայություններ	950,0	489,9
գ/ Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	***65083,0***	***58474,2***
• աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	1170,4	1170,4
• կապի ծառայություններ	16,0	16,0
• գույքի վարձակալություն	980,0	980,0
• ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	438,0	438,0
• հատուկ մասնագիտական ծառայություն	10220,0	5936,5
• շենքերի շինությունների ընթացիկ նորոգում	950,0	950,0

• տրանսպորտային նյութեր	31,9	31,9
• հատուկ նպատակային այլ նյութեր	3818,7	3726,4
• այլ կապիտալ դրամաշնորհներ	25620,0	25620,0
• այլ նպաստներ բյուջեից	25,0	25,0
• պարտադիր վճարներ	6500,0	4938,1
• այլ մեքենաներ և սարքավորումներ	995,0	712,0
• նախագծահետազոտական ծախսեր	14318,0	13929,9
2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**728328,8**	**431792,6**
ա/ Գյուղատնտեսություն	***28800,0***	***28367,3***
• աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	28755,0	28322,3
• ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	45,0	45,0
բ/ Ոռոգում	***257622,4***	***106882,5***
• շենքերի շինությունների կապիտալ նորոգում	242003,4	103142,4
• այլ մեքենաներ և սարքավորումներ	999,0	999,0
• նախագծահետազոտական ծախսեր	14620,0	2741,1
գ/ Գազիֆիկացում	***292967,1***	***242293,0***
• շենքերի շինությունների կառուցում	48034,1	29584,3
• շենքերի շինությունների կապիտալ նորոգում	244933,0	212708,7
դ/ Ճանապարհային տրանսպորտ	***148939,3***	***54249,8***
• ճանապարհների ընթացիկ նորոգում	9000,0	8939,8
• շենքերի շինությունների կառուցում	31469,3	31440,0
• ճանապարհների կապիտալ վերանորոգում	94000,0	0
• այլ մեքենաներ և սարքավորումներ	1000,0	400,0
• նախագծահետազոտական ծախսեր	13470,0	13470,0
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	**230040,0**	**218779,7**
ա/ Աղբահանություն	***150040,0***	***150036,9***
• աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	3236,4	3233,4
• կոմունալ ծառայություններ	229,0	229,0
• գույքի վարձակալություն	40,0	40,0
• տրանսպորտային նյութեր	797,5	797,5
• սուբսիդիաներ	145737,1	145737,0
բ/ Շրջակա միջավայրի պաշտպանություն	***80000,0***	***68742,8***
• սուբսիդիաներ	80000,0	68742,8

4. ԲՆԱԿ.ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**816426,1**	**692495,1**
ա/ Բնակարանային շինարարություն	***225463,0***	***149864,9***
• սուբսիդիաներ	80000,0	79389,9
• այլ կապիտալ դրամաշնորհներ	6813,0	6553,4
• շենքերի կապիտալ վերանորոգում	91250,0	63921,6
• այլ մեքենաներ և սարքավորումներ	47400,0	0
բ/ Ջրամատակարարում	***444018,0***	***414746,4***
• աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	498,5	498,5
• էներգետիկ ծառայություններ	244133,6	236933,9
• գույքի վարձակալություն	40,0	0
• ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	182,9	182,9
• շենքերի շինությունների ընթացիկ նորոգում	185,0	185,0
• սուբսիդիաներ	20000,0	18801,1
• շենքերի շինությունների կապիտալ նորոգում	128786,0	118733,0
• նախագծահետազոտական ծախսեր	50192,0	39412,0
գ/ Փողոցների լուսավորում	***146945,1***	***127883,8***
• էներգետիկ ծառայություններ	40000,0	36547,0
• սուբսիդիաներ	100000,0	85328,8
• շենքերի շինությունների կառուցում	6945,1	6008,0
5. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	**2000,0**	**2000,0**
• ընթացիկ դրամաշնորհներ	2000,0	2000,0
6. ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ, ԿՐՈՆ	***158750,0***	***100483,1***
ա/Հանգստի սպորտի ծառայություններ	***1460,0***	***161,8***
• կենցաղային և հանրային սննդի նյութեր	300,0	0
• հատուկ նպատակային այլ նյութեր	1160,0	161,8
բ/ Գրադարան	***9000,0***	***6629,4***
• աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	9000,0	6629,4
գ/ Մշակույթի տուն	***135300,0***	***86207,6***
• աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	13480,0	13274,7
• էներգետիկ ծառայություններ	7500,0	6888,1
• կոմունալ ծառայություններ	20,0	20,0
• ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	500,0	0
• հատուկ մասնագիտական ծառայություն	500,0	0

• սուբսիդիաներ	65000,0	49919,4
• շենքերի շինությունների կառուցում	7300,0	6350,5
• շենքերի կապիտալ վերանորոգում	35000,0	7349,9
• նախագծահետազոտական ծախսեր	6000,0	2405,0
դ/ Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում	***1690,0***	***1180,2***
• աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	190,0	185,2
• ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	1000,0	995,0
• ընթացիկ դրամաշնորհ	500,0	0
ե/ Այլ մշակութային կազմակերպություններ	***11300,0***	***6304,1***
• ներկայացուցչական ծախսեր	2000,0	0
• ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	5000,0	3236,1
• կենցաղային և հանրային սննդի նյութեր	3000,0	2181,9
• հատուկ նպատակային այլ նյութեր	1300,0	886,1
7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	**754124,5**	**665674,3**
7.1 Նախադպրոցական դաստիարակություն	***607895,3***	***532285,9***
• աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	222,0	222,0
• Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում	12000,0	11697,8
• սուբսիդիաներ	413458,0	392333,9
• շենքերի շինությունների կառուցում	108261,2	105118,8
• շենքերի կապիտալ վերանորոգում	44454,1	3810,4
• նախագծահետազոտական ծախսեր	29500,0	19103,0
7.2 Հանրակրթական ուսուցում	***4000,0***	***3980,1***
• ընթացիկ դրամաշնորհ	4000,0	3980,1
7.3 Արտադպրոցական դաստիարակություն	***140229,2***	***129408,3***
• սուբսիդիաներ	106850,0	104284,5
• ընթացիկ դրամաշնորհ	5229,2	5229,2
• շենքերի շինությունների կառուցում	21550,0	19305,7
• նախագծահետազոտական ծախսեր	6600,0	589,0
7.4 Կրթություն /այլ դասերին չպատկանող/	***2000,0***	***0***
• կրթական , մշակութային նպաստներ բյուջեից	2000,0	0
8. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	**15000,0**	**8585,0**
• այլ նպաստներ բյուջեից	14000,0	8335,0
• նվիրատվություններ	1000,0	250,0

9. ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ	25933,4	0
պահուստային միջոցներ	25933,4	0
10. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	-150000,0	-143031,1
• մուտքեր հողի օտարումից	-150000,0	-142951,9
• այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր	0	-79,2
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	3566864,6	2885124,7

Մնացորդը 31.12.2022 թվականի դրությամբ կազմում է 420427,5 հազար դրամ, որից՝

Ֆոնդային բյուջեի մնացորդ 420427,5 հազար դրամ

Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառում

2022 թվականի ընթացքում Մեծամոր համայնքի պաշտպանության ոլորտում կազմվել են «Քաղաքացիական պաշտպանության», «Աղետների ռիսկերի կառավարման» և «Համայնքի տարհանման» պլանները:

2022 թվականի մարտ ամսին Մեծամորի համայնքապետարանում անցկացվել է հրշեջ ծառայության ուսումնական վարժանք, որի շրջանակում տարհանվել են համայնքապետարանի աշխատակազմի աշխատողները: Քաղաքացիական պաշտպանության բնագավառում ուսումնական վարժանքները շարունակական բնույթ են կրում:

Կրթության, մշակույթի սպորտի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

Մեծամոր համայնքի ենթակայությամբ գործում են 18 նախադպրոցական (Ալաշկերտ, Ակնալիճ, Այգեշատ, Արազափ, Արգավանդ, Արմավիր, Բամբակաշատ, Եղեգնուտ, Մարգարա, Մեծամոր, Մրգաշատ, Նալբանդյան, Նոր Արմավիր, Նոր Արտագերս, Նորապատ, Ջանֆիդա բնակավայրերում), 6 Արվեստի, երաժշտական դպրոց (Մեծամոր, Ալաշկերտ, Արմավիր, Արևիկ, Նալբանդյան, Մրգաշատ բնակավայրերում), 1 մարզադպրոց, «Մշակույթի տուն և գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները:

2022 թվականի ընթացքում Մեծամոր համայնքում կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտներում իրականացվել են.

- շրջայցեր, ստուգայցեր համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատություններ:

- Ապահովվել է մասնակցությունը համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների միջոցառումներին՝ աշխատանքային ժամանակացույցին համապատասխան:
Մասնակցություն է եղել նաև այլ կազմակերպությունների միջոցառումներին, ծրագրերին:
Համայնքային սոցիալական ծրագրի իրականացման շրջանակներում՝ Մեծամոր համայնքի «Ընտանիք և համայնք» բարեգործական և «Հույսի Մեծամոր» ՀԿ-ների հետ համագործակցությամբ եղել է մասնակցություն սոցիալ-հոգեբանական աջակցության «Հաշմանդամություն ունեցող երեխաների ցերեկային խնամք» դրամաշնորհային ծրագրի քննարկման, մշակման, մշտադիտարկման խմբի ձևավորման աշխատանքներին:

- 2022 թվականի ընթացքում Մեծամոր համայնքի ավագանու որոշմամբ սահմանվել են համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների վարձավճարների զեղչեր.

  - ✓ նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող 277 երեխայի համար՝ 1371000 (մեկ միլիոն երեք հարյուր յոթանասունմեկ հազար) դրամի չափով.
    100% զեղչ 1080000 (մեկ միլիոն ութսուն հազար) դրամ
    50% զեղչ 291000 (երկու հարյուր իննսունմեկ հազար) դրամ

  - ✓ նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախող, Մեծամոր համայնքում բնակություն հաստատած Արցախից տեղահանված ընտանիքների 6 երեխաների համար սահմանվել է 100% զեղչ 36000 (երեսունվեց հազար) դրամի չափով:

  - ✓ արտադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող 102 երեխայի համար՝ 163000 (հայրուր վաթսուներեք հազար) դրամի չափով.
    100% զեղչ 122000 (մեկ հարյուր քսաներկու հազար) դրամ
    50% զեղչ 41000 (քառասունմեկ հազար) դրամ

- Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կազմակերպվել և անցկացվել են համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթները («Մշակույթի տուն և գրադարան» ՀՈԱԿ, «Մեծամոր համայնքի մարզադպրոց» ՀՈԱԿ, «Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ):

- Մասնակցություն է եղել և համապատասխան աջակցություն տրամադրվել Մեծամոր համայնքի երիտասարդությանը 2022 թվականի օգոստոսի 12-ին երիտասարդության օրվան նվիրված ճամբարի կազմակերպմանը:

- Տրամադրվել է տրանսպորտային միջոց (ավտոբուս) Մեծամոր համայնքի Նորապատ և Մրգաշատ բնակավայրերի 42 ուսանողների համար:

- Մշակույթի և սպորտի բնագավառներում հաջողություններ ձեռք բերած անձինք խրախուսվել են և արժանացել դրամական պարգևատրումների.

  - ✓ «*Մեծամոր համայնքի մարզադպրոց*» ՀՈԱԿ-ի ֆուտբոլային թիմը Մ-15 պատանեկան առաջնությունում I տեղը զբաղեցնելու համար պարգևատրվել է մարզագույքով, մարզահագուստով, թիմին տրամադրվել խոտհնձիչ մեքենա:

- 2022 թվականի հունվարի 27-ին Մեծամոր քաղաքի Սաշա Գալստյանի անվան N2 ավագ դպրոցում կազմակերպվել և անցկացվել է տղամարդկանց առաջին և երկրորդ տարիքային խմբերի միջև «ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական թենիսի մրցաշարը:

- 2022 թվականի մարտի 25-ին «Մեծամոր համայնքի մարզադպրոց» ՀՈԱԿ-ում անցկացվել է համայնքի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման համայնքային փուլը:

- 2022 թվականի ապրիլի 23-ին Մեծամոր քաղաքում անցկացվել է քայլերթ և մոմավառություն՝ ի հիշատակ 1915 թվականի Մեծ Եղեռնի զոհերի:

- 2022 թվականի հուլիսի 17-27-ը Արմավիր համայնքի քաղաքային մարզադաշտում Մեծամոր համայնքի թիմը մասնակցել է Արմավիրի մարզպետարանի նախաձեռնությամբ ՀՀ Արմավիրի մարզի տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների միջև ֆուտբոլային առաջնությանը և զբաղեցրել 3-րդ մրցանակային տեղը:

- 2022 թվականի հուլիսի 19-ին Մեծամոր համայնքի 30 գյուղական բնակավայրերի մասնակցությամբ անցկացվել է «*Ծիրանի փառատոն*» միջոցառումը:

- 2022 թվականի սեպտեմբերի 3-ին Մեծամոր համայնքի պատվիրակությունը՝ համայնքային ենթակայության արտադպրոցական ուսումնական և ոչ համայնքային կազմակերպությունների համագործակցությամբ, մասնակցել է «Մշակութային վերածնունդ. արվեստների և արհեստների փառատոն» միջոցառմանը:

- 2022 թվականի հոկտեմբերի 26-ին Մեծամոր համայնքը մասնակցություն է ունեցել «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղավազքի սիրողական մրցաշարին:

- Մեծամորի համայնքապետարանը 2022 թվականի մայիսի 4-ին մասնակցության հայտ է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթին:

  Հոկտեմբերի 6-ին Երիտասարդական մայրաքաղաքի ընտրության նպատակով կազմակերպվել է հանձնախմբի ներկայացուցիչների ընդունելություն և շրջայց Մեծամոր քաղաքում:

  Նոյեմբերի 15-ին ԿԳՄՍ

  նախարարությունում ամփոփվել են մրցույթի արդյունքները և Մեծամոր քաղաքը ճանաչվել է «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի երիտասարդական մայրաքաղաք»:

  Դեկտեմբերի 4-ից 7-ը Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում տեղի ունեցած «*Մենք միասին ենք*» միջազգային երիտասարդական համաժողովին՝ ԿԳՄՍ նախարարության պատվիրակության կազմում մասնակցություն է ունեցել Մեծամոր համայնքի ներկայացուցիչը՝ որպես «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի երիտասարդական մայրաքաղաք»-ի մրցույթի հաղթող:

  Դեկտեմբերի 6-ին Հրազդան քաղաքում տեղի ունեցած «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի երիտասարդական մայրաքաղաք» միջոցառման փակման արարողությանը Մեծամոր համայնքի պատվիրակությանն է հանձնվել «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի երիտասարդական մայրաքաղաք»-ի խորհրդանիշ հանդիսացող փոխանցիկ բանալին:

Պաշտպանության կազմակերպման բնագավառում

2022 թվականի ընթացքում հավաքագրվել է Մեծամոր համայնքի 2007 թվականին ծնված պատանիների ցուցակները և ուղարկվել ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Արմավիրի մարզային ստորաբաժանում: Պահեստազուրում ընդգրկված և համայնքում հաշվառված քաղաքացիներին է տրամադրվել վարժական հավաքներին մասնակցելու ծանուցագրերը:

Ապահովվել է ամառային և ձմեռային զորակոչին ենթակա, համայնքում հաշվառված և նախապես ծանուցված քաղաքացիների ներկայությունը բժշկական հետազոտությունների ընթացքում:

Համայնքապետարանը կազմակերպել է ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Արմավիրի մարզային ստորաբաժանման կողմից ամառային և ձմեռային զորակոչի ծանուցագրերի տրամադրումը: Կատարվել է պահեստազորում ընդգրկած և համայնքում հաշվառված քաղաքացիների ցուցակների ճշգրտման աշխատանքներ:

Որպես ապաստարան օգտագործելու նպատակով, կատարել ենք Մեծամոր քաղաքի բազմաբնակարան շենքերի նկուղների հաշվառման աշխատանքներ:

Համայնքի բնակիչներին իրազեկվել է արտակարգ իրավիճակների ժամանակ իրենց կցագրված ապաստարանների գտնվելու վայրի և անհրաժեշտ միջոցառումների մասին:

Քաղաքաշինության և հողաշինության բնագավառում

2022 թվականի ընթացքում տրվել է 284 նախագծման թույլտվություն, որոնք ամբողջությամբ համաձայնեցվել են:

Տրամադրվել է 214 շինարարության թույլտվություն և 40 շինարարությունների շահագործման փաստագրման ակտեր:

Կայացվել է համայնքի ղեկավարի «Հողի գործառական նշանակության փոփոխության»՝ 330, «Հողի նպատակային նշանակության փոփոխության» 20, «Գույքային իրավունքների վերականգնման» 116, «Հասցեների ճշտման և նոր հասցեների տրամադրման» 1210, «Ինքնակամ շինությունների օրինականացման»՝ 148 որոշումներ:

Կասեցվել է թվով 11 ինքնակամ շինարարություն:

Կազմվել և հաստատվել է 57 իրավիճակային հատակագիծ:

Ընթացիկ տարում կազմվել է 9 սուբվենցիոն ծրագրային հայտ և ներկայացվել ՀՀ կառավարություն, ծրագրային հայտերը դրական են գնահատվել կառավարության կողմից : Սուբվենցիոն ծրագրային հայտերից 16 ենթածրագրերը կատարված են մյուսները գտնվում են ընթացքի մեջ

2022 թվականի իրականցվել է հետևյալ սուբվեցիոն ծրագրերը:

1. 13ա շենքի տանիքի վերանորոգում, 2022 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը՝ 36 993 130 ՀՀ դրամ
2. 27 շենքի տանիքի վերանորոգում, 2022 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը ՝ 31 131 533 ՀՀ դրամ
3. 1 թաղամաս 4Բ1, 6Բ1, 8Բ1, 8Բ2 և 2Բ շենքերի վերելակների փոխարինում, 2022 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը՝ 47 400 000 ՀՀ դրամ
4. Փշատավան գյուղի գազաֆիկացում, 2022 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը ՝ 35 936 960 ՀՀ դրամ,
5. Մարգարա գյուղի գազաֆիկացում, 2022 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը ՝ 30 375 000 ՀՀ դրամ,
6. Ջանֆիդա գյուղի գազաֆիկացում, 2022 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը ՝ 24 676 807 ՀՀ դրամ,

7. Գետաշեն գյուղի գազաֆիկացում, 2022 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը՝ 41 715 662 ՀՀ դրամ,
8. Շենավան գյուղի գազաֆիկացում, 2022 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը՝ 59 038 613 ՀՀ դրամ,
9. Նոր Արմավիր գյուղի գազաֆիկացում, 2022 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը՝ 28 169 000 ՀՀ դրամ,
10. Ակնալիճ գյուղի գազաֆիկացում, 2022 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը՝ 14 870 000 ՀՀ դրամ,
11. Թվով 15 խորքային հորերի վերականգնում, 2022 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը՝ 238 350 266 ՀՀ դրամ,
12. Մեծամոր քաղաքի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցում, 2022 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը՝ 10 156 640 ՀՀ դրամ,
13. Արտաշար գյուղի խմելու ջրամատակարաման ցանցի կառուցում, 2022 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը՝ 34 717 000 ՀՀ դրամ,
14. Նոր Կեսարիա գյուղի մշակույթի տան ջեռուցման համակարգի կառուցում, 2022 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը՝ 7 010 000 ՀՀ դրամ,
15. Նալբանդյան գյուղի երաժշտական դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում, 2022 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը՝ 8 770 000 ՀՀ դրամ,
16. Մրգաշատ գյուղի երաժշտական դպրոցի վերանորոգում և ջեռուցման համակարգի կառուցում, 2022 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը՝ 13 010 000 ՀՀ դրամ,

2022 թվականին իրականացվել է հետևյալ համայնքային ծրագրերը:

1. Զարթոնք գյուղի մանկապարտեզի հարակից տարածքի բարեկարգում և շենքի գազաֆիկացում, 2022 թվականի ավարտված համայնքային ծրագիր, արժեքը՝ 14 418 664 ՀՀ դրամ,
2. Մեծամոր քաղաքի հարթ տանիքների վերանորոգում, 2022 թվականի ավարտված համայնքային ծրագիր, արժեքը՝ 7 010 000 ՀՀ դրամ,
3. Մեծամոր քաղաքի թիվ 1 մանկապարտեզի շենքի գազաֆիկացում, 2022 թվականի ավարտված համայնքային ծրագիր, արժեքը՝ 1 684 312 ՀՀ դրամ,
4. Նալբանդյանի ԲԱ-ի շենքի գազաֆիկացում 2022 թվականի ավարտված համայնքային ծրագիր, արժեքը՝ 1 663 104 ՀՀ դրամ,
5. Նալբանդյան գյուղի երաժշտական դպրոցի գազաֆիկացում (ՀՈԱԿ-ի միջոցներով) 2022 թվականի ավարտված համայնքային ծրագիր, արժեքը՝ 973 652 ՀՀ դրամ,
6. Ալաշկերտ գյուղի այգու բարեկարգման աշխատանքներ (Լուսավորություն և կանաչապատում ՀՈԱԿ-ի միջոցներով) 2022 թվականի ավարտված համայնքային ծրագիր, արժեքը՝ 2 155 104 ՀՀ դրամ,
7. Համայնքի փողոցային լուսավորության աշխատանքներ (Լուսավորություն և կանաչապատում ՀՈԱԿ-ի միջոցներով) 2022 թվականի ավարտված համայնքային ծրագիր, արժեքը՝ 24 651 400 ՀՀ դրամ,

Կոմունալ տնտեսության բնագավառում

Մեծամոր քաղաքում կոմունալ տնտեսության բնագավառում կատարվել են մի շարք աշխատանքներ: Դրանք են՝

«Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի շենքի դիմացի այգու լուսավորության աշխատանքներ՝:

Մեծամոր քաղաքի կենտրոնական զբոսայգու ցանկապատի և խաղահրապարակի, սպորտ համալիրի բասկետբոլի խաղահրապարակի ներկման և վերանորոգման աշխատանքներ

Մեծամոր քաղաքի 1թաղ. 16շ, 2թաղ 2բ, 4շ-ի տանիքների մասնակի վերանորոգման աշխատանքներ

Մեծամոր քաղաքի 1թաղ 26 շենքի խմելաջրի խողովակների մասնակի վերանորոգման աշխատանքներ:

2 թաղամասում խորքային պոմպը փոխարինվել է նորով, 1թաղ. 18, 11, 25, 30 շենքերի մուտքերի դիմացի հատվածների վերանորոգում, ցայտաղբյուրի տեղադրում

1թաղ 13, 16, 24, 22 շենքերում կատարվել են ճաղավանդակների վերանորոգման աշխատանքներ

13 բարձրահարկ շենքերում կատարվել են աղբատար խողովակների փակման աշխատանքներ

1թաղ 3, 13գ, 2թաղ 3բ շենքերի կոյուղու չուգունից խողովակները փոխարինվել են պլաստմասե խողովակներով

փոխարինվել են նորով՝ 1թաղ 4, 8, 10, 12, 6բ1, 6բ2, 2թաղ 1բ շենքերի նկուղային հարկերի խողովակները

1թաղ 4բ2, 6բ1, 6բ2, 3, 8, 10, 11, 13, 9, 2գ, 10գ, 14գ, 17, 16, 18, 21, 25, 2թաղ 2բ, 3բ շենքերում կատարվել է նկուղային հարկերի կոյուղու խողովակների մասնակի վերանորոգում

Մեծամոր համայնքում կատարվել է նաև աշխատանքներ հետևալ բնակավայրերում.

Երասխահուն բնակավայրում կատարվել է խմելու ջրի խորքային պոմպի մասնակի վերանորոգում, ինչպես նաև հուշարձանի տարածքի բարեկարգման աշխատանքներ

Արևիկ բնակավայրում Մշակույթի տան հարակից փողոցում կատարվել է խմելու ջրի ջրագծերի անցկացման և վերանորոգման աշխատանքներ՝

Գետաշեն բնակավայրում գերեզմանատան, դպրոցի և մշակույթի տան հարակից տարածքների խմելաջրի ջրագծերի մասնակի վերանորոգման աշխատանքներ՝

Հայկավան բնակավայրի մի շարք փողոցներում կատարվել է խմելու ջրի ջրագծերի մասնակի վերանորոգման աշխատանքներ՝

Վարդանաշեն բնակավայրում մի շարք փողոցներում կատարվել է խմելու ջրի ջրագծերի փոխարինման և անցկացման աշխատանքներ

Ամասիա բնակավայրում կատարվել է խմելաջրի ջրագծերի մասնակի վերանորոգման աշխատանքներ՝

Մրգաշատ բնակավայրում կատարվել է բուժամբուլատորիայի խմելաջրի ջրագծերի վերանորոգման աշխատանքներ

Նոր Արմավիր բնակավայրում կատարվել է մի շարք փողոցների խմելաջրի ջրագծերի մասնակի վերանորոգման, հուշարձանի կառուցման և բարեկարգման աշխատանքներ

Ջրաշեն բնակավայրում կատարվել է մի շարք փողոցների խմելաջրի ջրագծերի վերանորոգման աշխատանքներ

Բամբակաշատ բնակավայրում կատարվել է կենտրոնական փողոցի խմելաջրի ջրագծերի և մանկապարտեզի կոյուղու խողովակների մասնակի վերանորոգման աշխատանքներ

Նոր Արտագերս բնակավայրում կատարվել է խմելաջրի ջրագծերի վերանորոգման աշխատանքներ

Նալբանդյան բնակավայրում կատարվել է խմելաջրի ջրագծերի վերանորոգման աշխատանքներ

Այգեշատ բնակավայրում կատարվել է վարչական շենքի անձրևատարների, խմելաջրի ջրագծերի, կոյուղու ջրահեռացման մասնակի վերանորոգման աշխատանքներ

Նորապատ բնակավայրում կատարվել է բուժամբուլատորիայի սանհանգույցի, խմելաջրի և կոյուղու ջրագծերի վերանորոգման աշխատանքներ

Տարոնիկ բնակավայրում կատարվել է գերեզմանատան ջրագծի մասնակի վերանորոգում

Մարգարա բնակավայրում կատարվել է հուշարձանի և հարակից տարածքների ճանապարհների փոսալցման աշխատանքներ

Արգավանդ բնակավայրում կատարվել է լողավազանի ներկման աշխատանքներ

Ալաշկերտ, Նոր Արտագես, Տանձուտ, Մեծամոր, Զարթոնք, Նոր Արմավիր, Արգավանդ, Հայկավան,Արմավիր, Այգեշատ, Արտաշար, Արազափ, Տարոնիկ, Շենավան, Երասխահուն, Բամբակաշատ, Ամասիա, Մրգաշատ, Եղեգնուտ, Ակնալիճ, Ջանֆիդա, Փշատավան, Նոր Կեսարիա, Մարգարա, Արևիկ բնակավայրերում տեղադրվել են ընդհանուր թվով **2293** հատ *ԼԵԴ սյան լուսատու 50w 5000K*, որի արժեքը կազմում է **22700700** (քսաներկու միլիոն յոթ հարյուր հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:

Մեծամոր, Երասխահուն, Նոր Արտագես, Արմավիր բնակավայրերում փոխարինվել են նորով ընդհանուր թվով **19170** մետր *Ալյումինե մալուխ, ԱԱՎԳ 2*12մմ²*, որի արժեքը կազմում է **5463450** (հինգ միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

Ալաշկերտ, Նոր Արտագես, Տանձուտ, Մեծամոր, Զարթոնք, Նոր Արմավիր, Արգավանդ, Հայկավան,Արմավիր, Այգեշատ, Ամասիա, Մրգաշատ, Եղեգնուտ, Ակնալիճ, Ջանֆիդա, Երասղահուն բնակավայրերում փոխարինվել են նորով ընդհանուր թվով **14720** մետր *Էլեկտրական լար, ԱՊՎ, 1*16մմ²*, որի արժեքը կազմում է **1472000** (մեկ միլիոն չորս հարյուր յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ:

Մեծամոր, Երասխահուն, Մրգաշատ, Նորապատ, Բամբակաշատ, Ամասիա բնակավայրերում փոխարինվել են նորով ընդհանուր թվով **1500** մետր *Ալյումինե մալուխ, ԱԱՎԳ 2*6մմ²*, որի արժեքը կազմում է **300000** (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

Առևտրի և ծառայությունների բնագավառում

2022 թվականի ընթացքում տրամադրվել է համայնքի տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի 158, հանրային սննդի կազմակերպման և իրացման 11, արտաքին գովազդի տեղադրման 15, հեղուկ վառելիքի 12, մանրածախ առևտրի կետերում տեխնիկական հեղուկների 19, հեղուկացված գազերի 15 թույլտվություններ:
Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում իրականացվում է հսկողություն, որի արդյունքներն են.

- Հաշվետու ժամանակաշրջանում գործող օբյեկտների քանակը

Առևտրուր-225
Հանրային սնունդ- 19
Կենցաղային ծառայություն -42

- Տարվա ընթացքում հսկողություն իրականացված օբյեկտների քանակը

Առևտուր-165
Հանրային սնունդ- 19
Կենցաղային ծառայություն-42

Արձանագրված խախտումներ չկան:

Սոցիալական աջակցության և առողջապահության բնագավառում

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանը սոցիալական և առողջապահության ոլորտներում իրականացվող աշխատանքների ընթացքում համագործակցել է ՀՀ Արմավիրի մարզպետարանի, Արմավիրի տարածքային միասնական սոցիալական ծառայության (ՄՍԾ), ՀՀ-ում Արցախի կառավարության օպերատիվ շտաբի և այլ պետական կառույցների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում Մեծամոր համայնքի բնակիչներից ստացված սոցիալական օգնության դիմումների պատշաճ ուսումնասիրման, պահանջվող փաստաթղթերի հավաքագրման, ինչպես նաև տնային այցելությունների արդյունքում ընտանիքի կարիքների գնահատման համար հիմք են հանդիսացել Մեծամոր համայնքի ավագանու 2022թ. փետրվարի 2-ի «Մեծամոր համայնքի կամավոր խնդիրները, դրանց

լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» N7 և «Մեծամոր համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N11 որոշումները: Իսկ դիմումների ուսումնասիրության արդյունքների համակողմանի և անաչառ քննարկումներն ապահովելու, համապատասխան եզրակացության արդյունքում որոշում կայացնելու համար Մեծամոր համայնքի ղեկավարի 2022թ. ապրիլի 4-ի թիվ 093 կարգադրությամբ ստեղծվել է սոցիալական աջակցության հանձնաժողով:

2022թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում մուտքագրվել է 247 դիմում, որոնք պատշաճ ուսումնասիրվել են: Կայացել է սոցիալական աջակցության հանձնաժողովի 18 նիստ և դրամական աջակցություն տրամադրելու մասին թվով 24 որոշում: Եղել են նաև արտակարգ կամ չնախատեսված իրավիճակների առաջացմամբ պայմանավորված դիմումներ, որոնց քննարկումներն իրականացվել են արագացված ընթացակարգով և դրամական աջակցություն ցուցաբերելու մասին համայնքի ղեկավարի կայացրած որոշման համար հիմք է հանդիսացել գործը վարող մասնագետի հատուկ եզրակացությունը և հանձնաժողովի նախագահի ներկայացրած գրությունը: Ստացված 247 դիմումից 51-ը չի բավարարվել՝ սահմանված չափորոշիչներին չհամապատասխանելու պատճառով հանձնաժողովի բացասական եզրակացության հիմքով, իսկ 196 դիմում բավարարվել է և դրամական աջակցություն տրամադրելու մասին համայնքի ղեկավարի ընդունած որոշումներով հատկացված գումարի ընդհանուր չափը կազմել է 6.665.000 (վեց միլիոն վեց հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Մեծամոր համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 28-ի N94 որոշմամբ հաստատվել է խնամակալության և հոգաբարձության մարմնի կանոնադրությունը և խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի (ԽՀՀ) անհատական կազմը՝ բաղկացած ինը անդամից: Ձևավորումից ի վեր, հանձնաժողովը պատշաճ ուսումնասիրել է քաղաքացիներից ստացված բոլոր դիմումները, ըստ անհրաժեշտության կատարել տնային այցելություններ՝ կազմելով ընտանիքի կենսապայմանների հետազոտման ակտ:

2022թ. ապրիլ-դեկտեմբեր ժամանակահատվածում կայացել է ԽՀՀ 18 նիստ, այդ թվում՝ ընդլայնված կազմով, որին հրավիրվել են ՀՀ Արմավիրի մարզպետարանի, Արմավիրի տարածքային միասնական սոցիալական ծառայության (ՄՍԾ), ոստիկանության, հանրակրթական ուսումնական հաստատության ներկայացուցիչներ, հոգեբան: Բոլոր նիստերի օրակարգում տեղ գտած հարցերի քննարկման արդյունքում կազմվել է համապատասխան եզրակացություն և խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ համայնքի ղեկավարի կողմից ընդունվել թվով 27 որոշում, որոնց օրինակները տրամադրվել են դիմումատուներին:

Մեծամորի համայնքապետարանը սերտորեն համագործակցել է հասարակական կազմակերպությունների հետ՝ ընդառաջ գնալով համայնքի բնակչության առանձին խմբերին սոցիալական ծառայություններ մատուցելուն ուղղված առաջարկներին, ինչպես նաև գործուն աջակցություն ցուցաբերել մի շարք սոցիալական ծրագրերի իրականացման գործում:

Մեծամոր քաղաքում գործում են «Ընտանիք և համայնք» և «Հույսի Մեծամոր» ՀԿ-ները, որոնք մի շարք հումանիտար ծրագրեր են իրականացրել սոցիալապես անապահով ընտանիքների և հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում:

2022թ. փետրվարի 7-ին համագործակցության հուշագիր է ստորագրվել Մեծամորի համայնքապետարանի և «Ընտանիք և համայնք» ՀԿ-ի միջև, որի շրջանակներում նշված ՀԿ-ի նախաձեռնությամբ համայնքապետարան ներկայացված «Միասին հանուն սոցիալական համայնքների» համալիր ծրագիրը Մեծամոր համայնքի ավագանու 2022թ. հունիսի 24-ի թիվ 132 որոշմամբ հաստատվել է որպես համայնքի զարգացման հնգամյա պլանին կից փաստաթուղթ:

«Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի նախաձեռնությամբ և Մեծամորի համայնքապետարանի աջակցությամբ ք. Մեծամորում հիմնվել է հացաբուլկեղենի արտադրամաս, որը շահագործման է հանձնվել սեպտեմբեր ամսից: Նշված արտադրամասում աշխատանքի ընդունվելու միջոցով լուծվել է Արցախից տեղահանված մոտ 12 ընտանիքի զբաղվածության խնդիրը:

Մեծամոր քաղաքի հյուրանոցում ժամանակավորապես բնակվում են Արցախից տեղահանված 20 ընտանիք՝ 81 շնչով, որոնք մշտապես գտնվել են համայնքապետարանի ուշադրության կենտրոնում:

Արմավիրի զարգացման կենտրոնի նախաձեռնությամբ մեկնարկել է Մեծամոր քաղաքի մշակույթի տան փոքր դահլիճի վերանորոգման աշխատանքները: Մեծամորի համայնքապետարանի ներկայացուցիչները ակտիվորեն մասնակցել են ՀՀ առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների, Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ), «Սոցիալական աշխատողների ասոցիացիա» ՀԿ-ի, Արմավիրի զարգացման կենտրոնի(ԱԶԿ) և այլ կազմակերպությունների նախաձեռնած սեմինարներին, գիտաժողովներին, կլոր սեղան-քննարկումներին:

Մեծամոր համայնքում գործում է 20 բժշկական ամբուլատորիա և 7 բժշկական մանկաբարձական կենտրոն (ԲՄԿ): Հաշվետու ժամանակահատվածում ձեռնարկվել են քայլեր համայնքում բժշկական օգնության որակի բարձրացման ուղղությամբ, որի շրջանակներում 2022թ. մայիսի 5-ին համագործակցության հուշագիր է ստորագրվել համայնքապետարանի և «ՏԱՏ Կլինիկ» ՍՊԸ-ի միջև: Նշված կազմակերպության կողմից բժշկական ամբուլատորիաներում իրականացված համակողմանի ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվել են համայնքի ղեկավարին: Համայնքապետարանում հրավիրվել է ԲԱ տնօրենների խորհրդակցություն և հանձնարարվել ողջամիտ ժամկետներում վերացնել թերություններն ու բացթողումները:

Յուրաքանչյուր ամիս համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի կողմից հավաքագրվել է բժշկական ամբուլատորիաների ամսական հաշվետվությունները և փոխանցվել ՀՀ Արմավիրի մարզպետարան:

Անհրաժեշտությունից ելնելով, Մեծամորի համայնքապետարանը համագործակցել է Մեծամորի բժշկական կենտրոնի հետ՝ համայնքապետարան դիմած բնակչության խոցելի

խմբերին օրենքով սահմանված կարգով հասանելիք դեղորայքի ձեռքբերման, պետպատվերի շրջանակներում բժշկական ծառայություններից օգտվելու և նմանատիպ այլ խնդիրների կարգավորման հարցերի շուրջ:

Համայնքի հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կազմում է 1765, որից 516-ը՝ մինչև 18 տարեկան, իսկ 1249-ը 18 տարեկանից բարձր անձինք:

2022թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում համայնքում գրանցվել է 738 ծնունդ և 440 մահ:

Մեծամոր համայնքի ղեկավարի 2022 թվականի ապրիլի 4-ի թիվ 094 կարգադրությամբ ստեղծվել է բնակարանային հարցերի հանձնաժողով: Հաշվետու ժամանակահատվածում բնակարանային պայմանների բարելավման նպատակով բնակչության առանձին խմբերից (զոհվածի, անհետ կորածի, զինհաշմանդամի ընտանիքներ) ստացվել է 7 դիմում, որոնք քննարկման են դրվել հանձնաժողովի նիստերում, կազմվել համապատասխան եզրակացություն: Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» N1419-Ն որոշմամբ և հիմք ընդունելով բնակարանային հարցերի հանձնաժողովի եզրակացությունները, Մեծամոր համայնքի ղեկավարն ընդունել է բնակարանային պայմանների բարելավման ցուցակում հաշվառելու մասին որոշումներ, կազմվել բնակարանային գործեր և ՀՀ կառավարության նշված որոշմամբ հաստատված Ձև N4 ամփոփացուցակը սահմանված կարգով ուղարկվել ՀՀ Արմավիրի մարզպետարան՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը համապատասխան միջնորդություն ներկայացնելու համար:

Գյուղատնտեսության բնագավառում

2022 թվականի ընթացքում Մեծամոր համայնքում իրականացվել են գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտի հետևյալ միջոցառումները.

1. 2022թվականի մարտ ամսին համայնքում մեկնարկեց ՀՀ կառավարության մարտի 3-ի N 281-Լ որոշմամբ հաստատված «Հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման աջակցության ծրագիրը», որից օգտվել են համայնքի 31 բնակավայրերից մոտ 2780 հողօգտագործող՝ ձեռք բերելով գրեթե 1540800 կգ պարարտանյութ:

2. Մեծամոր համայնքի գրեթե բոլոր բնակավայրերում իրականացվել է գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն. մասնավորապես՝ հողատեսքի փոփոխման դիմում է ներկայացրել 235 հողմասի սեփականատեր: Նրանց տրամադրվել է բարձրարժեք հողատեսքը ցածրարժեքի փոխադրելու 45 և ցածրարժեքը բարձրաժեքի փոխադրելու համայնքի ղեկավարի 190 որոշում:

3. 2022 թվականի ընթացքում վերականգնվել են թվով 16 խորքային հորեր Մեծամոր համայնքի Տանձուտ, Հայկավան, Մրգաշատ, Արմավիր, Արգավանդ, Բամբակաշատ, Զարթոնք, Վարդանաշեն (2 խորքային հոր), Արտաշար(2 խորքային հոր), Տարոնիկ(2 խորքային հոր), Երասխահուն, Արազափ բնակավայրերում:

4. Իրականացվել է համայնքի բնակավայրերում մշակաբույսերի ամենամսյա հաշվառում և ամփոփ տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Արմավիրի մարզային տեսչություն:

5. Համայնքի 31 բնակավայրերում իրականացվել է անասնագլխաքանակի ամենամյա հաշվառում և ներկայացվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Արմավիրի մարզային տեսչություն:

Մեծամոր համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյան